



տվյալներ կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ցուցանիշների, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին:

Կառավարչական հաշվառման ոլորտը զարգանում է, և արդի միտումները նոր պահանջներ են առաջադրում ֆինանսական տեղեկատվության կառավարմանը՝ շեշտադրվելով կայուն զարգացման համակարգի դրույթները: Վերջերս հրապարակված և ուժի մեջ մտած IFRS-S շարքի ստանդարտները ֆինանսական տեղեկատվության կառավարման շրջանակը կապում են կազմակերպության ռիսկերն ու հնարավորությունները հաշվի առնող ռազմավարության, դրան համապատասխան չափիչների սահմանման և հաշվետվողականության համակարգի ձևավորման հետ, ինչն էլ անհրաժեշտություն է առաջացրել ինչպես ինքնարժեքի, այնպես էլ ողջ կազմակերպության մակարդակով որոշումների կայացմանն աջակցող ցուցանիշների սահմանման և հաշվետվողականության ձևավորման վերաբերյալ մշակել ֆինանսական տեղեկատվության կառավարման կառուցակարգերի կատարելագործման ուղիներ: Ուստի, ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ինչպես ավանդական, այնպես էլ կայուն զարգացման հայեցակարգերի դրույթներով ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված հետազոտությունն արդիական է:

#### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման արդիական հայեցակարգի մշակումն է, որի հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել ֆինանսական տեղեկատվության շրջանակը, կառավարման մեխանիզմները, հիմնախնդիրներն ու նպատակադրումները ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում,
- գործարարության զարգացման ներկա միտումների համատեքստում առաջարկել հետահայաց բնույթ ունեցող տեղեկատվական համակարգից անցում դեպի տեսանելի ապագային ուղղված և կայուն զարգացման նպատակադրումներով ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ,
- մշակել կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ և առևտրային կազմակերպություններում դրանց ներդրման հնարավոր ուղղություններ,
- ձևավորվող հաշվապահական ներքին և արտաքին հաշվետվական հոսքերից տարբերակել կառավարչական հաշվառման համակարգում տեղեկատվության հաշվետվական նպատակներն ու ուղղությունները՝ ESG

(բնապահպանական, սոցիալական, կառավարչական) հայեցակարգի համատեքստում,

- կայուն զարգացմանն առնչվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS-S) կարգաբերումներին համապատասխան՝ ներկայացնել գործունեության հիմնական ցուցանիշներով ռազմավարական նպատակադրումների կատարողականի վերլուծության և գնահատման կառուցակարգ,
- կայուն զարգացման գործունեության առանցքային ցուցանիշների ներառմամբ առաջարկել ռազմավարական նպատակադրումների կատարողականի համապարփակ գնահատման մոտեցում,
- մշակել անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մեխանիզմ,
- առաջարկել առևտրային կազմակերպությունների գործարարության կայուն զարգացման մշտադիտարկման ընդհանրացված ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանություն:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն է կառավարչական հաշվառման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման կառուցակարգի կատարելագործման ուղղությամբ մոտեցումների ներկայացումը: Մասնավորապես.

- մշակվել են կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ և դրանց ներդրման մոտեցումներ՝ առաջարկելով ավանդական, հետահայաց բնույթ ունեցող տեղեկատվական համակարգից դեպի տեսանելի ապագային ուղղված և կայուն զարգացման նպատակադրումներին ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգ,
- կայունությանն առնչվող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS-S) նպատակադրումներին համապատասխան՝ մշակվել են կայուն զարգացման կառավարչական հաշվետվողականության մոտեցումներ՝ ներառելով բնապահպանական, սոցիալական և կառավարչական տեղակատվական ռազմավարական ինտեգրված հոսքեր, հնարավորություն ստեղծելով վերլուծելու և գնահատելու ESG կատարողականի ցուցանիշները,
- ներկայացվել է անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մեխանիզմ՝ այդ ծախսումների խմբավորման, և ըստ գործառույթի ինքնարժեքին վերագրման արժեհաշվարկի մոտեցմամբ,
- մշակվել է առևտրային կազմակերպությունների կայուն զարգացման գնահատման մեթոդաբանություն՝ կիրառելով բնապահպանական,

սոցիալական և կառավարչական ինտեգրալային ցուցանիշ, որը հնարավորություն է ստեղծում մշտադիտարկելու ESG կատարողականը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության *ներածությունում* հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ *«Ֆինանսական տեղեկատվության կառավարման տեսամեթոդական հիմքերը կառավարչական հաշվառման համակարգում և հիմնախնդիրները ՀՀ առևտրային կազմակերպություններում»* վերտառությամբ գլխում ուսումնասիրվել են ֆինանսական տեղեկատվության շրջանակը, կառավարման մեխանիզմները և նպատակադրումները, վեր են հանվել այդ տեղեկատվության կառավարման հիմնախնդիրները հաշվառման զարգացման ներկա պայմաններում: Այս գլխում վերլուծվել և քննարկվել են նաև ֆինանսական տեղեկատվության կառավարման մոտեցումները և հիմնախնդիրները ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում:

Ատենախոսության երկրորդ՝ *«Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները ՀՀ առևտրային կազմակերպությունների կառավարչական հաշվառման համակարգում»* գլխում միջազգային լավագույն փորձի դիտարկմամբ քննարկվել են կառավարչական հաշվառման կարգավորման անհրաժեշտությունը և նպատակադրումները ֆինանսական տեղեկատվության կառավարման բարելավման շրջանակներում, որպես ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմ ներկայացվել են կառավարչական հաշվառման քաղաքականության դրույթներ, ինչպես նաև անդրադարձ է կատարվել ինքնարժեքի մասին տեղեկատվության բարելավման հիմնահարցին:

Ատենախոսության երրորդ՝ *«Կայուն զարգացման նպատակադրումներով ինտեգրված ֆինանսական տեղեկատվական հոսքերի կառավարման համակարգի կառուցումը»* գլխում ներկայացվել են անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մշակված մեխանիզմը, կայուն զարգացման կառավարչական հաշվետվողականության և առևտրային կազմակերպություններում կայուն զարգացման ընդհանրացված ցուցանիշի հաշվարկման առաջարկվող մոտեցումները:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության *«Եզրակացություններ»* բաժնում:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Նորույթի առաջին կետում՝ կառավարչական հաշվառման քաղաքականության բարելավմամբ ֆինանսական տեղեկատվության կառավարման կատարելագործման առաջարկվող մեխանիզմի գործիքակազմում, ներառվել է ֆինանսական տեղեկատվական հոսքերը կայուն զարգացման հայեցակարգով դիտարկելու գաղափարը, նշելով որ նման մոտեցումը նշանակալիորեն բարելավում է հաշվառման դասական համակարգը, միաժամանակ չուռճացնելով ներտնտեսական հաշվետվողականության նպատակով արդեն իսկ ձևավորվող տեղեկատվական հոսքերը, սակայն կարծում ենք, որ համակարգը չձանրաբեռնելու հետ կապված միտքը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:
2. Գծապատկեր 1.2.3.-ում (էջ 26) ներկայացվել է կառավարչական հաշվառման համակարգում ձևավորվող տեղեկատվության հաշվետվական նպատակների և ուղղությունների տարանջատումն ավանդական տեղեկատվական հոսքերից, ինչն ընդլայնում է կառավարչական հաշվառման հաշվետվական շրջանակը, քանի որ ներառում է նաև արտաքին ուղղվածությունը, ուստի ցանկալի կլինեք այնուհետև մշակված՝ կայուն զարգացման կառավարչական հաշվետվողականության մոտեցումների հետ միասին անդրադարձ կատարել նաև ESG արտաքին հաշվետվողականության հիմնական կողմերին:
3. Աշխատանքի երկրորդ գլխում՝ միջազգային լավագույն փորձի դիտարկմամբ քննարկվել են կառավարչական հաշվառման կարգավորման անհրաժեշտությունը և մասնագիտացված կառույցի ստեղծման նպատակադրումները ֆինանսական տեղեկատվության կառավարման բարելավման շրջանակներում, որպես հիմնական գործառույթ ներկայացնելով ստանդարտացումը: Այնուհետև երրորդ գլխում ներկայացված անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության առաջարկվող մեխանիզմը կարելի էր դիտարկել ինքնարժեքի ոլորտային ստանդարտացման տեսակետից, այդ կերպ զարգացնելով գաղափարի կիրառելիությունը:
4. Երրորդ նորույթի կետում ներկայացվել է անուղղակի ծախսումների մասին տեղեկատվության կառավարման մեխանիզմ՝ այդ ծախսումների խմբավորման, և ըստ գործառույթի ինքնարժեքին վերագրման արժեհաշվարկի մոտեցմամբ՝ թիրախավորելով շահութաբերության մասին առավել ճշգրիտ տեղեկատվություն ձևավորելու և գնագոյացման հետ կապված որոշումների հիմնավորման նպատակները: Սակայն նկարագրված մոտեցումը հաշվապահական ծրագրերի, նաև աշխատակիցների մասնագիտական հմտությունների առավել ճկուն կիրառումներ է պահանջում՝ մեծացնելով ծախսատարությունը: Այս իմաստով

ցանկալի կլիներ ներկայացնել ծախսեր-ակնկալվող օգուտներ հարաբերակցության մասին տեղեկատվությունն սա:

5. Կառավարչական հաշվառման համակարգում ձևավորվող տեղեկատվությամբ՝ կայուն զարգացման ընդհանրացված ցուցանիշի առաջարկվող կառուցվածքում ստենախոսը ներառել է ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներ, սակայն կարծում ենք, որ միայն հարաբերական ցուցանիշների կիրառումը տարբեր կազմակերպությունների համեմատության համատեքստում, առավել ճշգրիտ արդյունք կարող է ապահովել:
6. Ստենախոսը հաջողությամբ կիրառել է մշակված կայուն զարգացման ընդհանրացված ցուցանիշը դինամիկայում՝ (էջ 108-112) դիտարկելով նաև մասնակի ցուցանիշների շարժընթացը (որոնց հաշվարկները հավելված 3.3.2-ում և 3.3.3-ում պատշաճ կերպով կատարված են), սակայն դրանց արդյունքներով կառավարչական հնարավոր որոշումների ընդունման տարբերակները մեկնաբանել է միայն «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի, «Երևան գարեջուր» ՓԲԸ-ի և «Ջերմուկ Գրուպ ՓԲԸ-ի համար, ուսումնասիրված մյուս առևտրային կազմակերպություններին չանդրադառնալով:
7. Ինչպես աշխատանքում, այնպես էլ սեղմագրում առկա են լեզվաոճական և տեխնիկական բնույթի թերություններ ու բացթողումներ, որոնք, սակայն, էական ազդեցություն չեն ունեցել շարադրանքի որակի վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արփինե Սանասարի Հակոբյանի «Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները կառավարչական հաշվառման համակարգում (ՀՀ առևտրային կազմակերպությունների նյութերով)» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է կառավարչական կառավարման համակարգում ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիների բացահայտմանը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակված 17 (տասնյոթ) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը և խնդիրներին:

Արփինե Սանասարի Հակոբյանի «Ֆինանսական տեղեկատվության կառավարման մեխանիզմների կատարելագործման ուղիները կառավարչական հաշվառման համակարգում (ՀՀ առևտրային կազմակերպությունների նյութերով)» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 17 (տասնյոթ) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական

աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (13.08.2025թ., արձանագրություն թիվ 10):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ  
առաջատար գիտաշխատող,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝

Բ.Վ.Գաբրիելյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ  
գիտաշխատող,  
տնտեսագիտության թեկնածու

Տ.Վ.Շահինյան

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ առաջատար գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Բ.Գաբրիելյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Տ.Շահինյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում էմ»*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ  
գիտ. քարտուղար,  
տնտեսագիտության թեկնածու  
«13» օգոստոսի, 2025թ.

Ե.Ա. Հակոբյան

Կ.Տ.

